



86. ՕՑԵՆ ԽՈՍԿԸ

Օցը քյինամ ա մին մարթու բաղում պէմ տինում, առեն օր մին վրեսկե տուս օնում, տինում պէմին ըռաշխին: Էտ մարթը ամեն օր կյամ ա վրեսկին յոր օնում, ըստուծին փառք տամ, օցին էլ էրկան ուժբուր օզում, թողում, քյինամ:

Մին տունան ետը տա էնքան հըրուտանում ա, վրեր օզում ա քյինա Մեքկա, հաջի տըեռնա: Քյինալիս տղին թափշուր ա անում, թա վրեր ամեն օր քյինաս վրեսկին յոր օնես, օցին քյեկին նի շի կյամ:

Հարը վրեր հըղե յա ինում, տղան մին քանի օր քյինամ ա պէմին ըռաշան վրեսկին յոր օնում, մինգյել մտածում ա, թա իստի ընելավ հի՞բ պիտի հըրուտանամ, հաղյիր էն ա օցին ըսպանեմ, պէմեր քանդիմ, վրեսկին լոխ մին դունումանց տուս տամ: Լիճա վրեր մհակը եր կալած քյինամ ա բիդի պէմը, պէմին դըլդումը վրեննը կենում, օցը տուս ա կյամ, կըլխին օզում ա թա թիս, հաքյվին ա նի կյամ, հաքյին կտրվում ա, օցը շաշմիշ ա ինում, լոք տամ տղին վրեննան կծում, աղում չանավը հընցըցնում, ըսպանում: Հարը խարարն ըսկանում ա, կյամ: Համ տղենան ա ինում, համ վրեսկան:

Մին քանի տարե վրեր անց ա կենում, էտ պէնն էլ քյինամ-նում ա, հարը քյինամ ա օցին ղալանք-պղատանք անում, թա հինչու իլալ ա, իլալ ա, եթ բիրիշինք: Օցը թա՞ լե՞, վրել տու կը-կարես քու տղետ մընեատ քցիս, վրել էլ ես՝ իմ՝ հաքյիս: Տու՝ քըղետե, ես՝ ինձետե: